1993
30.04.2015թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N7 22.04. 2015թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել նիստի օրակարգը հետևյալ հարցերով
1. Թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2 Եղեգիս համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին:
3.Եղեգիսի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերից աճուրդ - վաճառք հայտարարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

4. <<ՈՈՒՄ ընդ ՀԱՐ>> ՍՊԸ-ի հետ սերվիտուտի պայմանագիրը կնքելու մասին:

| Համայնքի ավագանիներ` | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. [signature] | [signature] | | |
| 2. [signature] | [signature] | | |
| 3. [signature] | [signature] | | |
| 4. | | | |
| 5. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` [signature] ՅՈՒ. [illegible]

[stamp]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Եղեգիս
հեռ.24186

ՈՐՈՇՈՒՄ N 8 — 22.04.2015թ.

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27 կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հ.Հ. վարչապետի 2001թ.-ի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 27.03.2015թ-ի թիվ 28 դրական եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգիսի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություն, Յայարփի Մնացականյանին պատկանող 0,212 հա պտղատու այգին/ծածկագիր 10-021-0110-0040/ փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա,բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, բնակելի տուն կառուցելու համար:

| Համայնքի ավագանիներ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1. | | | |
| 2. | | | |
| 3. | | | |
| 4. | | | |
| 5 | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N9 22.04.2015 թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ – ՎԱՃԱՌՔ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով*

*Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հայտարարել համայնքային սեփականություն հանդիսացող ներքո նշված հողերի աճուրդ-վաճառք գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:*
   *Ծածկագիր 10-021-0114 0,52000 հա արոտ հող*
   *Ծածկագիր 10-021-0114 0,33780 հա արոտ հող*

*2. Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:*
*3. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել աճուրդ-վաճառք և տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:*

| Համայնքի ավագանիներ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1 | | | |
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |
| 5 | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ[illegible]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N10 22.04. 2015 թ.

գ. Եղեգիս
Հեռ. 24186

*ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՅ ՍՊԸ-Ի ՀԵՏ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջով*

*Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Համայնքի վարչական սահմանում գտնվող հողամասերից ,,<< ՌՈՒՍ ընդ ՀԱՅ >> ՍՊԸ -ի հետ կնքելու սերվիտուտի պայմանագիր 50 տարի ժամկետով, 1,4 հա մակերեսով հոսանքի գծի կառուցապատման համար, տարեկան 40000 ՀՀ դրամ վարձավճարով:*

| Համայնքի ավագանիներ՝ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| 1 [signature] | [signature] | [signature] | |
| 2 [signature] | [signature] | [signature] | |
| 3 [signature] | [signature] | [signature] | |
| 4 | | | |
| 5 | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature]